ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017
Հունվար
02.2017
03.2017
04.2017
05.2017
06.2017
07.2017
08.2017
09.2017
10.2017
11.2017
12.2017

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Հունվար

թիվ 1 (221)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-24-Ն ՀՀ օրենքը

4 «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-27-Ն ՀՀ օրենքը

5 «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-37-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Իդրամ» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպության մի շարք մասնաճյուղեր հաշվառելու, «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի՝ բանկային գործունեության և մի շարք ՍՊԸ-ների գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամը» հիմնադրելու և Կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱԼԵՔՍ-ԳՐԻԳ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի որոշ լիցենզիաներ ուժը կորցրած ճանաչելու, «ԱԼԵՔՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի որոշ մասնաճյուղերի արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև «Արմենիա» ազգային գործարարական լուծարվող բանկը լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած համարելու վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «ՋԻ ԷՅՉ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի փոխանցման ակտը գրանցելու, ինչպես նաև «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի մի շարք մասնաճյուղեր որպես «Արդշինբանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղեր և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Երևան» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ-ի «Ապարան» մասնաճյուղը գրանցելու, ինչպես նաև 7 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 237-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 238-Ն որոշումը «Վարկային գործառնության և կրեդիտի դիմաց վճարման հատուկ կարգ սահմանելու, ինչպես նաև վարկային կոդերի կառուցվածքը սահմանելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 239-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 240-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

21 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 241-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 242-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

23 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 243-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 244-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

25 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 15-րդ կետի «իրավաբանական անձանց միությունների» բառերը փոխարինել «հասարակական կազմակերպության» բառերով.

2) 16-րդ կետի «իրավաբանական անձանց միություններին» բառերը փոխարինել «հասարակական կազմակերպությանը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
16 հունվարի 2017 թ., Երևան, ՀՕ-24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-63-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում «իրավաբանական անձանց միության կազմակերպական-իրավական ձև ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ինքնակարգավորվող» բառերը փոխարինել «հասարակական» բառով:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «իրավաբանական անձանց միություն» բառերը փոխարինել «հասարակական կազմակերպություն» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
16 հունվարի 2017 թ., Երևան, ՀՕ-27-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին (ՀՀՊՏ N 5 (1280), 25.01.17):
[***] *ՀՀՊՏ 2010 N 26 (760), 16.06.10:*

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-150-Ն օրենքի 8.2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «(իրավաբանական անձանց միություններ)» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
16 հունվարի 2017 թ., Երևան, ՀՕ-37-Ն

[*] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին (ՀՀՊՏ N 5 (1280), 25.01.17):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառվել են*** «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Աշտարակ» և «Արարատ» մասնաճյուղերը (որոշում թիվ 1Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության՝ բանկային գործունեության և «Ռոբերտ Մարության», «Եվրո Կրեդիտ», «ՆԿ Նիհելա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 5Ա, 11Ա, 17Ա, 18Ա):
- ***Հիմնադրվել է*** «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամ» և հաստատվել է Կանոնադրությունը (որոշում թիվ 6Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱԼԵՔՍ-ԳՐԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 758/1, 758/2, 758/7 և 758/14 լիցենզիաները (որոշում թիվ 9Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «ԱԼԵՔՍ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 10, 11, 12, 13 մասնաճյուղերին (որոշում թիվ 10Ա):
- ***Լուծարված է համարվել*** «Արմենիա» ազգային գործարարական լուծարվող բանկը, իսկ նրա ***գործունեությունը՝ դադարեցված*** (որոշում թիվ 14Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՋԻ ԷՅՋ ՋԻ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիան (որոշում թիվ 25Ա):
- ***Գրանցվել է*** «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության փոխանցման ակտը: Բանկերի գրանցամատյանում ***կատարվել է գրառում*** «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարեցման վերաբերյալ (որոշում թիվ 1/08Ա):
- ***Գրանցվել են*** «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Տիգրան Մեծ» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Տիգրան Մեծ» մասնաճյուղ,
    - «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոնական» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Բյուզանդ» մասնաճյուղ,
    - «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրի» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Շիրակ» մասնաճյուղ,
    - «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Նալբանդյան» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Նալբանդյան» մասնաճյուղ,
    - «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Վանաձոր» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Լոռի» մասնաճյուղ,
    - «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան 2» մասնաճյուղ,
    - «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Արթիկ» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Արթիկ 2» մասնաճյուղ,

- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Էջմիածին» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Վաղարշապատ» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Մարտունի» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Մարտունի 2» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Քանաքեռ» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Քանաքեռ» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Արմավիր» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Արմավիր 2» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Աբովյան» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Կոտայք» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Արտաշատ» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Արտաշատ 2» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Էրեբունի» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Ստատուս» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Չարենց» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Չարենց» մասնաճյուղ,
- «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերության «Կոմիտաս» մասնաճյուղը՝ որպես «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Կոմիտաս 2» մասնաճյուղ,
- Գրանցվել է «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Երևան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/09Ա):

- ***Գրանցվել է*** «ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ապարան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/43Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 7 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/11Ա, 1/15Ա-1/19Ա, 1/57Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը, 47-րդ հոդվածի 2-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի ««Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը» սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 104-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ուժը կորցրած ճանաչել Որոշմամբ հաստատված հավելվածի Չև 1-ի 3-րդ կետը,

2) Որոշմամբ հաստատված հավելվածի Չև 3-ից հանել «Բանկում առկա ի պահ տրված այլ ակտիվներից արգելանքը վերացնելու մասին (արժեքը չի նշվում) _____ բառերը,

(արգելանքը վերացնել)»

3) Որոշմամբ հաստատված հավելվածի Չև 4-ից հանել «Եթե գումարը չի բավարարում, նշվում է. Բանկում ի պահ տրված այլ ակտիվների առկայության և արգելադրման մասին (արժեքը չի նշվում) _____ » բառերը:

(այո, ոչ)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 237-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀԳՏ N4 (573), 1.02.2017):

*Վարկային գործառնության և կրեդիտի դիմաց վճարման հատուկ կարգ սահմանելու, ինչպես նաև վարկային կոդերի կառուցվածքը սահմանելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել բանկերում և վարկային կազմակերպություններում վարկի մարումների գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ամբողջ վճարահաշվարկային համակարգի համար յուրաքանչյուր վարկային պրոդուկտի ճանաչման և նույնականացման համակարգի ներդրման միջոցով, ինչպես նաև դրա միջոցով նախադրյալներ ստեղծել առցանց և իրական ժամանակում (real time) հեռահար սպասարկման համակարգերով համապատասխան ծառայությունների մատուցման համար (այդ թվում՝ իրական ժամանակում բանկային ծառայությունների մատուցման համար (online banking)),

հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգի ներդրման վերջնական փուլում հնարավորություն կընձեռվի հաճախորդներին իրական ժամանակում (real time) առցանց գործարքների իրականացման համար և ընդունելով համակարգի վերջնական ներդրման կապակցությամբ բանկերի (վարկային կամ վճարահաշվարկային կազմակերպությունների) համար առաջացող խնդիրները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարևորում է նշված համակարգի ներդրումը փուլային եղանակով, հետևյալ հաջորդականությամբ.

- Որպես առաջին փուլ ՀՀ տարածքում բոլոր վարկերը կկոդավորվեն սույն որոշմամբ սահմանվող կառուցվածքին համապատասխան և հնարավորություն կընձեռվի վարկերի ուղղակի մարումների իրականացման համար *(առանց ընթացիկ կամ հաճախորդի այլ բանկային հաշիվներին մուտքագրման)*.
- Որպես երկրորդ փուլ, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմամբ կապահովվի վճարահաշվարկային համակարգի ներսում իրական ռեժիմում կրեդիտային պարտավորությունների չափի (պարտքի) ստացումը և իրական ռեժիմում գործարքի իրականացումը (մարումը).
- Առաջին և երկրորդ փուլերի ներդրումից հետո հնարավորություն կստեղծվի համապատասխան կոդերի միջոցով յուրաքանչյուր առանձին վճարման (վճարողի) նույնականացման համար:

Ելնելով նաև վարկային պարտավորությունների կատարման հեշտացման անհրաժեշտությունից և ընդունելով ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից մարման գործընթացի շուրջ ներկայացված սպառողների բազմաթիվ ազդակները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը, 43-րդ հոդվածի 1.1 մասը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Վարկային գործառնության և կրեդիտի դիմաց վճարման հատուկ կարգը, ինչպես նաև վարկային կոդերի կառուցվածքը»՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի ապրիլի 30-ից:
3. Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում ՀՀ տարածքում գործող բանկերը և վարկային կազմակերպությունները պատվիրված նամակով կամ այլ եղանակով վարկային կոդերի վերաբերյալ տեղեկությունները ծանուցման միջոցով հայտնում են մինչ սույն որոշման ուժի մեջ մտնելը կնքված (այդ թվում՝ երկարաձգված) և գործող կրեդիտային պայմանագրի կողմ հաճախորդներին:
4. Սույն որոշման 3-րդ կետով սահմանված վարկային կոդերի վերաբերյալ ծանուցումները բանկերը կամ վարկային կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են ուղարկել և կիրառել մինչ սույն որոշման 3-րդ կետով սահմանված մեկ տարի ժամկետը:
5. Սահմանել, որ սույն որոշման նկարագրական մասում երկրորդ փուլի շրջանակում նկարագրված ենթակառուցվածքները ստեղծվում են մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը՝ բանկային (վարկային, վճարահաշվարկային) համակարգի ներքո իրական ռեժիմում կրեդիտային պարտավորությունների չափի

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀԳՏ N4 (573), 1.02.2017):

(պարտքի) ստացումը և իրական ռեժիմում կրեդիտային պարտավորության վճարման (մարման) գործարքների իրականացումն (ավարտը) ապահովելու համար, որից հետո ՀՀ տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները և վճարահաշվարկային կազմակերպությունները ապահովում են անդամակցումը սույն կետի հիման վրա ստեղծվող ենթակառուցվածքին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 238-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 238-Ն որոշմամբ

ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈԴԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է վարկային կոդի էությունը, ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից վարկային կոդի կիրառման, դրա միջոցով վճարումների իրականացման, բանկերի և վարկային կազմակերպության հաճախորդներին վարկային կոդի տրամադրման, վարկային կոդի կառուցվածքին ներկայացվող, ինչպես նաև այլ պահանջներ:

2. Սույն կարգով սահմանված կրեդիտ հասկացությունը օգտագործվում է որպես պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, վարկ, ֆինանսական վարձակալություն (լիզինգ), ինչպես նաև օգտագործվում է որպես ցանկացած այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակը ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է:

3. Յուրաքանչյուր առանձին կրեդիտի գծով դրամական պարտավորությունների վճարման (մարման) հերթականությունը (առաջնահերթությունը) սահմանվում է հաճախորդի հետ կնքված կրեդիտի պայմանագրով կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ:

4. Սույն կարգով սահմանված վարկային կոդի կիրառմամբ իրականացվող դրամական միջոցների փոխանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի օգոստոսի 25-ի թիվ 187-Ն որոշմամբ սահմանված՝ դրամական փոխանցման առավելագույն ժամկետների համաձայն:

5. Վճարում ընդունող կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից անճշտություններով կամ թերի ներկայացված վարկային կոդի կիրառման հետևանքով իրականացված (կամ չիրականացված) սխալ վճարման համար:

6. Սույն կարգով սահմանված վարկային կոդի կիրառմամբ իրականացվող վճարումների դիմաց ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող սակագինը չպետք է լինի ավելի, քան սահմանված է առանց վարկային կոդի կիրառման իրականացվող դրամական փոխանցման համար:

7. Սույն կարգով նախատեսված վարկային կոդի տրամադրումը չի բացառում հաճախորդի ցանկությամբ այլ եղանակով կրեդիտի պայմանագրից բխող պարտավորությունների դիմաց վճարման (մարման) իրականացումը:

8. Վարկային կոդի իրականացմամբ կատարված գործարքների նկատմամբ կիրառվում են «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնները:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈԴԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

9. Բանկը յուրաքանչյուր կրեդիտի տրամադրման դեպքով հաճախորդին տրամադրում է վարկային կոդ, հնարավորություն ընձեռելով կրեդիտառուին կամ կրեդիտառուի պարտավորությունների դիմաց վճարում (մարում) իրականացնող անձին վարկային կոդի կիրառմամբ (մուտքագրմամբ) իրականացված գործարքների պարագայում ուղղակիորեն (առանց ընթացիկ կամ հաճախորդի այլ հաշիվներին գումարի մուտքագրման) իրականացնել կրեդիտի գծով առկա պարտավորությունների դիմաց վճարում (մարում)՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

10. Վարկային կոդի տվյալները ներառվում են բանկի և վերջինիս հաճախորդի միջև կնքվող համապատասխան կրեդիտի տրամադրման պայմանագրում: Ընդ որում, սույն կետով սահմանված վարկային կոդը հանդիսանում է բանկի հաճախորդի և վերջինիս կրեդիտը նույնականացնող նիշերի հաջորդականություն, որի միջոցով նույնականացվում է բանկի հաճախորդի կոնկրետ կրեդիտը և որը կառուցվում է (կոդավորվում է) համաձայն սույն կարգի գլուխ 5-ի (սույն գլխում այսուհետ՝ Վարկային կոդ):

11. Բանկն իրական ռեժիմում բանկային ծառայություններ մատուցելու դեպքում (հեռահար սպասարկման համակարգերով) ապահովում է Վարկային կոդի կիրառմամբ (մուտքագրմամբ) հաճախորդի կրեդիտային պարտավորությունների դիմաց վճարման (մարման) գործարքի իրականացումը, ինչպես նաև իր հաճախորդների կողմից Վարկային կոդի կիրառմամբ կատարված գործարքների (այդ թվում՝ մարումների) մասին տեղեկատվությանը, հաճախորդի առկա կրեդիտային պարտավորություններին և դրա հետ կապված այլ տեղեկություններին հաճախորդի ծանոթանալու հնարավորությունը:

12. Բանկն ապահովում է նաև, որ հաճախորդի կամ վերջինիս օգտին կրեդիտի պայմանագրից բխող պարտավորությունների դիմաց վճարում (մարում) կատարող անձի կողմից Վարկային կոդի կիրառմամբ իրականացված վճարումները (մարումները) արտացոլվեն հաճախորդին տրամադրվող համապատասխան քաղվածքներում կամ այլ տեսքով տրամադրվեն հաճախորդին՝ անկախ կրեդիտի պայմանագրի կնքման կամ դրա գծով պարտավորությունների դիմաց վճարման (մարման) գործարքների իրականացման եղանակից՝ կանխիկ կամ անկանխիկ՝ տեղում (բանկի տարածքում) կամ իրական ռեժիմում (հեռահար սպասարկման համակարգերով):

13. Բանկն ապահովում է Վարկային կոդի կիրառմամբ իրականացված և այլ բանկին ուղղված վճարման ընդունումը և փոխանցումը, ինչպես նաև այլ բանկից (վարկատու չհանդիսացող) վարկային կոդի կիրառմամբ ստացված վճարման դիմաց կրեդիտի պայմանագրով սահմանված պարտավորությունների դիմաց վճարման (մարման) իրականացումը:

14. Բանկն ապահովում է նաև վարկային կազմակերպության կողմից վերջինիս հաճախորդին տրամադրված Վարկային կոդով և դրա կիրառմամբ վճարման իրականացումը:

15. Սույն կետով նախատեսված Վարկային կոդի տրամադրումը չի ենթադրում բանկի կողմից հաճախորդին մատուցվող լրացուցիչ ծառայություն, այլ կիրառվում է հաճախորդին տրամադրված կրեդիտի գծով պարտավորությունների ուղղակի կատարումն ապահովելու համար, որի տրամադրման կամ սպասարկման համար հաճախորդից վճարներ չեն գանձվում:

ԳԼՈՒԽ 3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈԴԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

16. Վարկային կազմակերպություններն իրենց կողմից հաճախորդին (վարկառուին) տրամադրված յուրաքանչյուր կրեդիտի համար ապահովում են վարկային կոդի տրամադրում ու դրա կիրառմամբ (մուտքագրմամբ) գործարքների իրականացումը: Ընդ որում, սույն կետով նախատեսված վարկային կոդը հանդիսանում է տվյալ վարկային կազմակերպությունում հաճախորդի և վերջինիս կրեդիտը նույնականացնող նիշերի հաջորդականություն, որով նույնականացվում է վարկային կազմակերպության հաճախորդի կոնկրետ կրեդիտը, և որը կառուցվում է համաձայն սույն կարգի գլուխ 5-ի (սույն գլխում այսուհետ՝ Վարկային Կոդ): Վարկային Կոդի տվյալները ներառվում են վարկային կազմակերպության և վերջինիս հաճախորդի միջև կնքվող համապատասխան կրեդիտի տրամադրման պայմանագրում:

17. Վարկային Կոդի տրամադրումն ու դրա գծով իրականացված գործարքների վարումը (հաշվառումը) չի ենթադրում վարկային կազմակերպության կողմից հաճախորդին մատուցվող լրացուցիչ ծառայություն, ինչի համար վարկային կազմակերպության կողմից իր հաճախորդից վճարներ գանձվել չեն կարող: Վարկային Կոդի նույնականացնող համարը տրամադրվում է վարկային կազմակերպության հաճախորդին՝ Վարկային Կոդի կիրառմամբ կրեդիտի գծով առկա պարտավորությունների վճարումներն իրականացնելիս դրանք նույնականացնելու նպատակով:

18. Վարկային կազմակերպությունը հեռահար սպասարկման ծառայություններ մատուցելու դեպքում ապահովում է իր հաճախորդների կողմից Վարկային Կոդի կիրառմամբ կատարված գործարքների (այդ թվում՝ մարումների) մասին տեղեկատվությանը, հաճախորդի առկա կրեդիտային պարտավորություններին և դրա հետ կապված այլ տեղեկություններին հաճախորդի ծանոթանալու հնարավորությունը:

19. Վարկային կազմակերպությունն ապահովում է Վարկային Կոդի կիրառմամբ իրականացված գործարքների արտացոլումը հաճախորդին տրամադրվող համապատասխան քաղվածքներում:

ԳԼՈՒԽ 4. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

20. Վճարահաշվարկային կազմակերպությունը ապահովում է սույն կարգի գլուխ 2-ով և գլուխ 3-ով սահմանված Վարկային կոդերի կիրառմամբ բանկին կամ վարկային կազմակերպությանն ուղղված վճարման ընդունումը՝ կրեդիտի պայմանագրով սահմանված պարտավորությունների դիմաց վճարման (մարման) համար:

ԳԼՈՒԽ 5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈԴԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

21. Բանկը կամ վարկային կազմակերպությունը կրեդիտի տրամադրման հետ կապված սույն կարգի գլուխ 2-ով ու գլուխ 3-ով սահմանված իր հաճախորդներին տրամադրվող վարկային կոդերը (այսուհետ սույն գլխում՝ վարկային կոդ) կառուցում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 23-ի թիվ 178-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) դրամական հաշվեհամարների կառուցվածքին ներկայացվող սկզբունքի համաձայն, բացառությամբ եթե սույն գլխով այլ բան սահմանված չէ:

22. Վարկային կոդերը թվերի և լատինատառ նիշերի հաջորդականություն է, որի երկարությունը 16 (տասնվեց) նիշ է, որտեղ բոլոր նիշերի կիրառումը պարտադիր է: Ընդ որում՝ վարկային կոդերի կառուցվածքում լրացվող բոլոր նիշերը կազմված են հետևյալ բաղադրիչ մասերից՝

1) բանկի կամ վարկային կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման կոդը առաջին 5 նիշն է, որտեղ առաջին 3 նիշը Ֆինանսական կազմակերպության համարն է, իսկ հաջորդ 2 նիշը կառուցվածքային ստորաբաժանման համարն է (գլխամասային գրասենյակը կամ դրա մասնաճյուղը),
2) հաճախորդին նույնականացնող թվային նիշերը (6 նիշ), որը լրացվում է Ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման կոդից հետո,
3) այնուհետև հաջորդում է ստուգիչ նիշը (1 նիշ),
4) որպես 13-րդ նիշ պարտադիր կիրառվում է «L» լատինատառ նիշը, որը հանդիսանում է կրեդիտի նույնացուցիչ,
5) վերջին 3 թվային նիշերը կիրառվում են բանկի կամ վարկային կազմակերպության հայեցողությամբ, որոնք բնութագրում են միևնույն հաճախորդի տարբեր կրեդիտները:

23. Մինչև վճարման ընդունումը հաճախորդին սպասարկող կազմակերպությունն ապահովում է վարկային կոդի կառուցվածքում ստուգիչ նիշի ստուգումը՝ համաձայն Որոշման:

24. Այն դեպքում, եթե բանկի կրեդիտառուն տվյալ բանկում արդեն իսկ (մինչ կրեդիտի պայմանագրի կնքումը) ունի բանկային հաշիվ, ապա Բանկը կարող է վարկային կոդի առաջին 12 նիշերը նույնացնել առկա բանկային հաշվի առաջին 12 նիշերի հետ: Ընդ որում, եթե միևնույն Բանկը հաճախորդի համար բացել և վարում է մեկից ավելի բանկային հաշիվներ, ապա վարկային կոդի առաջին 12 նիշերի հետ նույնացվող բանկային հաշվի ընտրությունը կատարում է տվյալ բանկը: Բանկի կողմից տրամադրված Վարկային կոդի 12 նիշերը և վերջինիս համապատասխան բանկային հաշվի 12 նիշերը պետք է նույնականացնեն միևնույն անձին:

25. Վարկային կոդի կառուցվածքում բանկի կամ վարկային կազմակերպության համարը իրենից ներկայացնում է վերջինիս նույնականացման նպատակով Որոշմամբ սահմանված կարգով տրամադրված Ֆինանսական կազմակերպության կոդը:

26. Բանկը կամ վարկային կազմակերպությունը պետք է կիրառի միայն վերջինիս նույնականացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված Ֆինանսական կազմակերպության կոդը: Կոդերի համար սահմանված համապատասխան թվային միջակայքերի համարները չեն կարող կիրառվել Ֆինանսական կազմակերպության կողմից, եթե դրանք ՀՀ կենտրոնական բանկի կողմից չեն տրամադրվել այդ կազմակերպությանը:

27. Վարկային կոդերի կառուցվածքի վերաբերյալ սույն որոշմամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են Որոշմամբ, եթե սույն որոշման իմաստից կամ բովանդակությունից չի բխում, որ դրանք չեն կարող կիրառվել սույն որոշմամբ սահմանված պահանջների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի մասնաճյուղերի ղեկավարների գրանցման գործընթացները, ամբողջացնել նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու գործընթացները և ընդլայնել բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի և ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար սահմանված որակավորումները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը, 18^1-րդ և 28-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգ 1-ի 36-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «գ. Ստեղծվող մասնաճյուղի ղեկավարի գրանցման վերաբերյալ բանկի միջնորդագիրը և ղեկավարի ու նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի 186.1-րդ կետով նախատեսված պահանջների:»,

2) Կանոնակարգ 1-ի 36-րդ կետի 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

3) Կանոնակարգ 1-ի 42-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «3. Բանկի միջնորդագիրը ստեղծվող մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ ու ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի 186.1-րդ կետով նախատեսված պահանջների:»,

4) Կանոնակարգ 1-ի 42-րդ կետի 4-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

5) Կանոնակարգ 1-ի 49-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «7) Բանկի մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ Կենտրոնական բանկ է ներկայացվում վարկային կազմակերպության միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի 186.1-րդ կետով նախատեսված պահանջների, և ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:»,

6) Կանոնակարգ 1-ի գլուխ 16-ը լրացնել 105.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «105.1. Ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության փոփոխության դեպքում բանկը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նշանակալից մասնակցի փոփոխության հիմնավորումը (մասնակցի կողմից իր մասնակցության օտարման պատճառներն ու հանգամանքները):»,

7) Կանոնակարգ 1-ի գլուխ 16-ը լրացնել 105.2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «105.2. Ուղղակի կամ անուղղակի նշանակալից ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակցի և նրա հետ փոխկապակցված ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման դեպքում բանկը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի անձը հաստատող փաստաթուղթը:»,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀՊՏ N4 (573), 1.02.2017):

8) Կանոնակարգ 1-ի 106-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Այլ մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ հիմնավորումը (մասնակցի կողմից իր մասնակցության օտարման պատճառներն ու հանգամանքները):»,

9) Կանոնակարգ 1-ը լրացնել 122.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«122.1. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն պարզ և բարդ ընթացակարգերով գրանցվող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ղեկավարների դեպքում, անձը հաստատող փաստաթուղթ:»,

10) Կանոնակարգ 1-ի 123-րդ կետի աղյուսակի 3-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի և ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները կամ Սի-Այ-էյ (CIA) կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակը կամ Սի-Այ-էս-էյ (CISA) որակավորում

:»,

11) Կանոնակարգ 1-ի 186-րդ կետը «փաստաթղթերը» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն կանոնակարգի 186.1-րդ կետով նախատեսված դեպքերի)» բառերով,

12) Կանոնակարգ 1-ը լրացնել 186.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«186.1. Բանկը մասնաճյուղի ղեկավարների գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում բանկի մասնաճյուղի ղեկավարի համապատասխանության և գրանցման վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 42-ի:»,

13) Կանոնակարգ 1-ի 187-րդ կետում «գործընթացները,» բառից հետո լրացնել «ինչպես նաև սույն կանոնակարգի Հավելված 43-ով սահմանված ուղեցույցային պահանջները,»,

14) Կանոնակարգ 1-ի 215-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հրդեհի ազդարարման ինքնաշխատ և անվտանգությանահազանգման շուրջօրյա գործուն համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, հրդեհի ազդարարման ինքնաշխատ շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի և բանկի մասնաճյուղի ամբողջ տարածքում և բանկի գլխամասի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը: Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի և բանկի մասնաճյուղի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին ու պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը և բանկի մասնաճյուղը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգ ունեցող տարածքներում, ապա բանկի տարածքի անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:»,

15) Կանոնակարգ 1-ի 229-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«229. Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը սույն կանոնակարգի Հավելված 11-ով սահմանված տեղեկանքի 2.3-րդ, 3.6-րդ, 3.8-3.9-րդ, 4.1-րդ, 4.3-րդ ենթակետերով և (կամ) 5-9-րդ կետերով (կամ) Հավելված 42-ում անձնական տվյալների վերաբերյալ սահմանված տեղեկությունների փոփոխության դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է այդ փոփոխությունները:»,

16) Կանոնակարգ 1-ի 230-րդ կետի 3-րդ պարբերությունում «զարգացմանը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ծրագիրը պետք է պարունակի վերլուծություն առկա ու սպասվող ռիսկերի վերաբերյալ և ներկայացնի դրանց կառավարման մեխանիզմները:»,

17) Կանոնակարգ 1-ի 232-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) Տվյալ գործարքի արդյունքում բանկի մոտ ի հայտ չեն գա չհիմնավորված ռիսկեր, և բանկը կունենա համարժեք կազմակերպչական ռեսուրսներ տվյալ գործարքի իրականացման համար:»,

18) Կանոնակարգ 1-ի Հավելված 11-ի 7.3-րդ կետում «կամ» բառից հետո լրացնել «վերջին 5 տարիների ընթացքում» բառերը,

19) Կանոնակարգ 1-ի Հավելված 11-ի 7.4-րդ կետում «կամ» բառից հետո լրացնել «վերջին 5 տարիների ընթացքում» բառերը,
20) Կանոնակարգ 1-ի Հավելված 31-ի 4.2-րդ կետում «3.3» թիվը փոխարինել «4.3» թվով,
21) Կանոնակարգ 1-ը լրացնել Հավելված 42-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
22) Կանոնակարգ 1-ը լրացնել Հավելված 43-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին, 3-րդ, 5-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, և 21-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 239-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 239-Ն որոշմամբ

Հավելված 42
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(ղեկավարի թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի),
_____
_____ անձը հաստատող փաստաթղթի տվյալները (նախկին և նոր անձնագրերի/նույնականացման քարտի տվյալները), հանրային _____
ծառայությունների համարանիշը, պաշտոնավարման սկիզբը)

☐ տրամադրել որակավորման վկայական՝ առանց քննության միջոցով որակավորման ստուգման
☐ գրանցել որպես

_____ :
(բանկի անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Հավաստիացնում եմ, որ _____-ի
(ղեկավարի անունը, ազգանունը)
համապատասխանության և անաղարտության «Հավուր պատշաճի» ուսումնասիրության և գնահատման բոլոր գործընթացներն իրականացվել են, և վերջինս համապատասխանում է _____
(ղեկավարի պաշտոնը)
պաշտոնում գրանցվելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

_____
(բանկի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ 20__ թ.:

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 239-Ն որոշմամբ

Հավելված 43
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Բանկերի մասնաճյուղի ղեկավարների (կառավարիչների և գլխավոր հաշվապահների) ընտրության և համապատասխանության գնահատման կարգը (ուղեցույցը) պետք է նվազագույնը բաղկացած լինի հետևյալ բաժիններից.

1) Փաստաթղթի նպատակը
2) Թեկնածուների կողմից ներկայացվող տեղեկությունները
3) Բանկի կողմից մասնագիտական որակների ստուգման ընթացակարգը
4) Բանկի կողմից անաղարտության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները
5) Հավաքագրված տեղեկատվության վերլուծությունը և ամփոփումը
6) Թեկնածուի նշանակման որոշման կայացումը
7) Ընթացիկ վերահսկողության իրականացման եղանակները
8) Տեղեկատվության արխիվացումը:

2. Բանկը ներկայացված բաժիններով պահանջվող գործընթացները նկարագրելիս հստակ նշում է այն ստորաբաժանումները և/կամ անձանց, որոնք (ովքեր) մասնակցում են մասնաճյուղի ղեկավարների ուսումնասիրության և նշանակման որոշման կայացման համապատասխան գործընթացում: Յուրաքանչյուր գործընթաց նկարագրվում է հնարավորինս մանրամասն:

3. ***«Փաստաթղթի նպատակը»*** բաժնում ներկայացվում է փաստաթղթի կարգավորման առարկան:

4. ***«Թեկնածուների կողմից ներկայացվող տեղեկությունները»*** բաժնում ներկայացվում են այն փաստաթղթերը, որոնք թեկնածուն պետք է ներկայացնի բանկ: Բանկը պետք է պահանջի ներկայացնել փաստաթղթեր, որոնք նվազագույնը կբացահայտեն ԿԲ կողմից ղեկավարի գրանցման համար պահանջվող «Ղեկավարների և նրա գործունեության վերաբերյալ» տեղեկանքով սահմանված տեղեկությունները:

5. ***«Բանկի կողմից մասնագիտական որակների ստուգման ընթացակարգը»*** բաժնում ներկայացվում են մասնաճյուղի կառավարիչների որակավորման և մասնագիտական համապատասխանության պահանջները: Ընդ որում, տվյալ պահանջները նվազագույնը պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղի ղեկավարների համար սահմանված պահանջներին: Բանկը կարող է սահմանել որակավորման և մասնագիտական համապատասխանության ավելի խիստ պահանջներ: Սույն բաժնում բանկը նկարագրում է նաև այն գործընթացները, որոնք առկա են բանկում մասնաճյուղի ղեկավարների որակավորման համապատասխանության գնահատման ապահովման համար:

Սույն բաժնում պետք է նկարագրվեն նաև այն ղեկավարների վերաբերյալ գործընթացները, ովքեր բանկի աշխատակիցներն են կամ վերադարձել են երկարատև արձակուրդից և կրկին պետք է նշանակվեն ղեկավար պաշտոնում կամ ռոտացման կարգով մեկ մասնաճյուղի ղեկավար պաշտոնից տեղափոխվել են մեկ այլ մասնաճյուղի ղեկավար պաշտոնին:

6. ***«Բանկի կողմից անաղարտության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները»*** բաժնում ներկայացվում են ղեկավարի և նրա հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության շրջանակը և այն բոլոր աղբյուրները, որոնցից բանկը հավաքագրում է մասնաճյուղի ղեկավարի և նրա հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը: Որպես տեղեկությունների ստացման պարտադիր աղբյուրներ պիտի լինեն՝

- Վարկային ռեգիստրը,
- Պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգը (www.e-register.am)
- ՀՀ ոստիկանությունը, իսկ ոչ ռեզիդենտների դեպքում՝ Ինտերպոլը

- Դատական տեղեկատվական համակարգը (www.datalex.am)
- Համացանցը,
- Սոցիալական կայքերը:

Բանկը կարող է սահմանել տեղեկությունների ստացման լրացուցիչ աղբյուրներ: Ընդ որում, բանկը պետք է հստակ ներկայացնի, թե յուրաքանչյուր աղբյուրից ինչպես և ինչ տեղեկատվություն է ստանում:

7. ***«Հավաքագրված տեղեկատվության վերլուծություն և ամփոփում»*** բաժնում ներկայացվում են մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության վերլուծության և ամփոփման գործընթացները: Բանկը նկարագրում է նաև այն գործընթացները, որոնք կիրառվում են խնդրահարույց տեղեկատվության հայտնաբերման դեպքում:

8. ***«Թեկնածուի նշանակման որոշման կայացում»*** բաժնում ներկայացվում է ամփոփված տեղեկատվության հիման վրա նշանակման որոշման կայացման գործընթացը:

Այս բաժնում պետք է ներառվեն բանկի աշխատակից հանդիսացող անձին որպես մասնաճյուղի ղեկավար նշանակումը, երկարատև արձակուրդից հետո ղեկավարին որպես մասնաճյուղի ղեկավար նշանակումը և մեկ մասնաճյուղի ղեկավարին այլ մասնաճյուղի ղեկավար նշանակումը կարգավորող ընթացակարգեր:

9. ***«Ընթացիկ վերահսկողության իրականացման եղանակներ»*** բաժնում ներկայացվում են Կանոնակարգ 1-ի 186.1-րդ կետով սահմանված ընթացակարգով գրանցված ղեկավարների նկատմամբ իրականացվող վերահսկողության գործընթացների կիրառման մեթոդները և պարբերականությունները:

10. ***«Տեղեկատվության արխիվացում»*** բաժնում ներկայացվում է հավաքագրված տեղեկությունների արխիվացման և պահպանման գործընթացը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի նկատմամբ կիրառվող պահանջները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-22-րդ հոդվածները, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի ««Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ի (այսուհետ նաև՝ Կանոնակարգ) 43-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գլխամասը/մասնաճյուղը պետք է ունենա հրդեհի ազդարարման ինքնաշխատ և անվտանգության ահազանգման շուրջօրյա գործուն համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, հրդեհի ազդարարման ինքնաշխատ շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի կազմակերպության ամբողջ տարածքում և կազմակերպության գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը: Կազմակերպության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե կազմակերպությունը կամ կազմակերպության մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգ ունեցող տարածքներում, ապա կազմակերպության կամ կազմակերպության մասնաճյուղի տարածքի անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:»:

2. Կանոնակարգի 9^1 գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ԳԼՈՒԽ 9^1. ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ»:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀԳՏ N4 (573), 1.02.2017):

3. Կանոնակարգի 150.1-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

4. Կանոնակարգի Հավելված 14-ը՝ «ՀԱՎԵԼՎԱԾ 14» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ՝ ««Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի»:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 240-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի նկատմամբ կիրառվող պահանջները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, 46-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի 204-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հրդեհի ազդարարման ինքնաշխատ և անվտանգության ահազանգման շուրջօրյա գործուն համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, հրդեհի ազդարարման ինքնաշխատ շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի ընկերության ամբողջ տարածքում և ընկերության գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը: Ապահովագրական ընկերության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե ապահովագրական ընկերությունը և (կամ) մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգ ունեցող տարածքներում, ապա ապահովագրական ընկերության և (կամ) մասնաճյուղի տարածքի ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 241-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀՊՏ N4 (573), 1.02.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի նկատմամբ կիրառվող պահանջները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը և 7-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի 159-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հրդեհի ազդարարման ինքնաշխատ և անվտանգության ահազանգման շուրջօրյա գործուն համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, հրդեհի ազդարարման ինքնաշխատ շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի վարկային կազմակերպության ամբողջ տարածքում և վարկային կազմակերպության գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը: Վարկային կազմակերպության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե վարկային կազմակերպությունը կամ վարկային կազմակերպության մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգ ունեցող տարածքներում, ապա վարկային կազմակերպության կամ վարկային կազմակերպության մասնաճյուղի տարածքի անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 242-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀԳՏ N4 (573), 1.02.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների շուրջօրյա հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի նկատմամբ կիրառվող պահանջները,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգ 4/01-ի 113-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) հրդեհի ազդարարման ինքնաշխատ և անվտանգության ահազանգման շուրջօրյա գործուն համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, հրդեհի ազդարարման ինքնաշխատ շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի ներդրումային ընկերության ամբողջ տարածքում և ներդրումային ընկերության գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, ինչպես նաև ներդրումային ընկերության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ ըստ տարածքի մակերեսի: Անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե ներդրումային ընկերությունը կամ ներդրումային ընկերության մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգ ունեցող տարածքներում, ապա ներդրումային ընկերության կամ ներդրումային ընկերության մասնաճյուղի տարածքի անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 243-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀԳՏ N4 (573), 1.02.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների շուրջօրյա հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի նկատմամբ կիրառվող պահանջները,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» 54-րդ հոդվածի 2-ին մասի 15-րդ ենթակետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգ 10/01-ի 60-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) հրդեհի ազդարարման ինքնաշխատ և անվտանգության ահազանգման շուրջօրյա գործուն համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, հրդեհի ազդարարման ինքնաշխատ շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի ներդրումային ֆոնդի կառավարչի ամբողջ տարածքում և գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե կառավարիչը կամ կառավարչի մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգ ունեցող տարածքներում, ապա ներդրումային ֆոնդի կառավարչի կամ մասնաճյուղի տարածքի անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ անվտանգության ահազանգման շուրջօրյա համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 դեկտեմբերի 2016 թ., N 244-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2017 թ. (ՀՀՊՏ N4 (573), 1.02.2017):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2017)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 29

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 32

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 37

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 38

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 50

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 65
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 75
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 77
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 85
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում
Հաճախորդների և նրանց բանկային հաշիվների քանակը

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	***2016 թ. դեկտեմբեր***	***2016 թ. դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2015 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)***	***2017 թ. հունվար***	***2017 թ. հունվարի իրական աճի ինդեքսը 2016 թ. հունվարի նկատմամբ (%)***
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		99.9		106.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	143400.3	105.9	108122.5	112.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	71361.0	106.5	16016.9	100.2
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	77592.5	89.9	7556.2	94.7
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	283823.7	104.4	128759.3	109.4
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	120703.4	99.4	96220 . 5	112.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	700.6	95.5	775.6	113.6
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	234227[1]	106.3[2]	188572[3]	106.9[4]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2017 թ.	***Սպառողական գների ինդեքս***	***Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս***	***Գների ինդեքս կապիտալ շինարարությունում***	***Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս***
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.6	100.3	99.3	103.2
2017 թ. հունվարը 2016 թ. հունվարի նկատմամբ	99.4	105.5	96.1	97.4

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2015*	*2016*	*2017*	*2017*	*2017*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.5[1]	2.2	2.6	2.6	-0.6
Փետրվար	- 0.1[1]	-1.4			
Մարտ	-0.1	-0.3			
Ապրիլ	-0.4	-0.3			
Մայիս	-0.5	-0.7			
Հունիս	-1.4	-0.5			
Հուլիս	-2.2	-2.3			
Օգոստոս	0.1	-0.5			
Սեպտեմբեր	0.1	0.1			
Հոկտեմբեր	-0.4	0.5			
Նոյեմբեր	0.6	1.0			
Դեկտեմբեր	1.7	1.1			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	-0.1	-1.1			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.7	-1.4			

ԳՆԱՁԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5]

Անվանում	*2017 թ. հունվարը 2016 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**102.63**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**6.66**	**3.00**
բանջարեղեն և կարտոֆիլ	48.99	2.64
միրգ	10.87	0.29
ձու	2.76	0.03
մսամթերք	0.23	0.02
կենդանական և բուսական յուղեր	0.66	0.02
շաքարավազ	0.56	0.00
հացամթերք	-0.03	0.00
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**-0.57**	**-0.13**
հագուստ և գործվածք	-1.91	-0.06
կոշկեղեն	-3.43	-0.05
դեղամիջոցներ	-0.19	-0.01
անձնական օգտագործման մեքենաներ	-0.15	-0.01
գեղահարդարման ապրանքներ	-0.27	-0.01
Ծառայություններ, որից՝	**-0.75**	**-0.24**
բնակարանային, կոմունալ	-1.82	-0.28
տրանսպորտի	-0.59	-0.02
հանգստի կազմակերպման	6.10	0.05
բուժսպասարկման	0.12	0.00

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2015	2016	2017
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.94[2]	0.02[2]	0.01
Փետրվար	0.21[2]	-0.09	
Մարտ	-0.09	-0.11	
Ապրիլ	-0.39	-0.11	
Մայիս	-0.14	-0.18	
Հունիս	-0.41	-0.39	
Հուլիս	-0.56	-0.27	
Օգոստոս	-0.20	-0.02	
Սեպտեմբեր	0.08	0.11	
Հոկտեմբեր	0.28	0.38	
Նոյեմբեր	-0.13	0.02	
Դեկտեմբեր	-0.12	-0.20	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.82[2]	-1.05[2]	-0.98
Փետրվար	4.45[2]	-1.39	
Մարտ	4.40	-1.47	
Ապրիլ	3.83	-1.31	
Մայիս	3.50	-1.35	
Հունիս	3.26	-1.45	
Հուլիս	2.42	-1.23	
Օգոստոս	1.93	-1.10	
Սեպտեմբեր	1.55	-1.12	
Հոկտեմբեր	1.35	-1.06	
Նոյեմբեր	0.74	-0.92	
Դեկտեմբեր	-0.54	-0.97	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**-0.98**
Պահիր տնական (կովի կաթից)	-0.16
Խոզի միս	-0.13
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	-0.12
Լվացքի փոշի ավտոմատ մեքենաների համար	-0.11
Բենզին	-0.10
Ալյուր բարձր տեսակի	-0.09
Թռչնի միս	-0.08
Սիրտ-աորթային հեղուկ դեղամիջոց «Կորվալոլ»	-0.06
Բուսական յուղ (արևածաղկի)	-0.06
Բնական գազով ավտոմեքենայի լիցքավորում	-0.05
Կոնֆետներ	-0.05
Կարագ	0.07
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.07
Բջջային հեռախոս	0.09
Շաքարավազ	0.15

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2016 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2016 թ. հունվար – դեկտեմբերը 2015 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2017 թ. հունվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2017 թ. հունվարը 2016 թ. հունվարի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1782.9	120.0	121.5	135.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	3292.4	101.6	237.2	151.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1509.5	86.1	115.8	172.8

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2016 թվական**					
	Հունվար			**Հունվար – դեկտեմբեր**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	32375	17911	14465	896916	333400	563516
ԱՄՆ	9638	5239	4399	176569	83862	92707
Ուկրաինա	526	457	69	9298	10705	-1407
Ղազախստան	749	73	676	18894	4368	14526
Գերմանիա	1798	1415	383	52134	23776	28358
Իսպանիա	620	811	-191	8839	12544	-3705
Ֆրանսիա	1709	940	769	30365	14589	15776
ԱՄԷ	1222	1513	-292	19509	22896	-3386
Չինաստան	155	4192	-4036	2939	56629	-53690
Թուրքիա	244	398	-154	2517	8154	-5637
Այլ երկրներ	13479	9570	3909	314903	246058	68845
Ընդամենը	**62516**	**42519**	**19997**	**1532883**	**816982**	**715901**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2017 թվական**		
	Հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	43553	16661	26891
ԱՄՆ	10750	5699	5051
Ուկրաինա	472	733	-261
Ղազախստան	1196	136	1060
Գերմանիա	2261	1988	273
Իսպանիա	592	1330	-737
Ֆրանսիա	1437	950	486
ԱՄԷ	1304	1492	-188
Չինաստան	211	2997	-2786
Թուրքիա	106	372	-266
Այլ երկրներ	22447	10288	12159
Ընդամենը	**84328**	**42647**	**41681**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2016 թվական					
	Հունվար			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	15731	8707	7024	429938	160260	269678
ԱՄՆ	4684	2546	2138	84811	40279	44532
Ուկրաինա	256	222	33	4463	5137	-673
Ղազախստան	364	36	328	9058	2098	6960
Գերմանիա	874	689	186	25248	11420	13828
Իսպանիա	302	394	-92	4248	6024	-1776
Ֆրանսիա	830	456	374	14576	7006	7571
ԱՄԷ	593	735	-142	9393	11001	-1607
Չինաստան	75	2036	-1961	1412	27156	-25744
Թուրքիա	119	194	-75	1211	3915	-2705
Այլ երկրներ	6549	4652	1897	151257	118239	33018
Ընդամենը	**30378**	**20668**	**9710**	**735616**	**392534**	**343081**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2017 թվական		
	Հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	21170	8100	13070
ԱՄՆ	5222	2769	2452
Ուկրաինա	229	356	-127
Ղազախստան	581	66	515
Գերմանիա	1096	967	129
Իսպանիա	288	646	-359
Ֆրանսիա	698	462	236
ԱՄԷ	634	725	-91
Չինաստան	102	1455	-1353
Թուրքիա	51	181	-129
Այլ երկրներ	10910	4999	5910
Ընդամենը	**40982**	**20728**	**20254**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2016	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	151.2	146.3	143.9	140.5	139.8	139.4	136.9	136.0	136.5	136.9	140.8	141.4
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	273.5	269.3	267.1	263.0	264.0	264.9	266.6	266.4	268.1	268.9	274.5	274.2
2017	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.5											
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	271.5											


[1] 2014 թ. մայիսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ փոփոխվել է գործընկեր երկրների սպառողական գների ինդեքսի բազիսային տարին՝ 2010=100 (նախկինում՝ 2005=100):
[2] Հաշվարկի մեջ ընդգրկված են 12 գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[4] Աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2016	2017
	Դ [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ	**2200.3**	**2067.3**
Ոսկի	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	3.5	1.0
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0
Արտարժույթ [2]	2196.8	2066.3

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2016	2017
	Դ [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**622.0**	**631.6**
ԱՄՀ վարկ	285.7	288.1
ՀՓԻ տեղաբաշխում	118.3	119.2
Այլ վարկեր	217.5	223.8
Այլ պարտավորություններ	0.5	0.5

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ ժամանակավոր ոչ ֆինանսական ընկերությունների նկատմամբ
	ընդամենը	վերնամասային ժամկետային	Կառավարության վերնամասային ժամկետային և վարկային հաշիվներ	Կառավարության վերնամասային ժամկետային	ՇԻԳ-երի միջոցներ	ՇԻԳ-երի միջոցներ	ընդամենը	
2016								
Դեկտեմբեր	21204	21204	182316	509	0	686	183511	**-162307**
2017								
Հունվար	21345	21345	206518	444	0	690	207652	**-186307**

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] *(մլն ՀՀ դրամ)*	**Շրջանառությունում կանխիկ դրամ** *(մլն ՀՀ դրամ)*	**Ցպահանջ ավանդներ դրամով** *(մլն ՀՀ դրամ)*	**M1** [2] *(մլն ՀՀ դրամ)*	**Ժամկետային ավանդներ դրամով** *(մլն ՀՀ դրամ)*	**M2** [3] *(մլն ՀՀ դրամ)*	**Արտարժույթով ավանդներ** *(մլն ՀՀ դրամ)*	**M2X** [4] *(մլն ՀՀ դրամ)*	**Փողի բազմապատիկ** [5]	**Դրամայնացման գործակից** [6]
2016										
Դեկտեմբեր	1042299	390918	264786	655705	418026	1073730	1106367	2180098	2.09	1.37
2017										
Հունվար	916389	363456	234479	597935	449198	1047133	1114253	2161386	2.36	1.47

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):

[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:

[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի




Փողի զանգվածի կառուցվածքը



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում



ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2008					
Հունվար	392414	311770	436539	543017	667012
Փետրվար	397743	318910	442821	553830	679753
Մարտ	396703	316816	439052	554479	689004
Ապրիլ	411656	319427	442005	566978	711779
Մայիս	415578	321819	443169	576861	717301
Հունիս	427375	326647	443402	580096	722560
Հուլիս	431177	327751	442788	582104	734211
Օգոստոս	431915	330269	450397	589447	741360
Սեպտեմբեր	430469	328902	453394	597694	758892
Հոկտեմբեր	429814	324861	439439	584320	746027
Նոյեմբեր	415638	316594	419958	566443	706296
Դեկտեմբեր	404022	292218	384012	503632	676619
2009					
Հունվար	403284	282310	374267	482084	665762
Փետրվար	404259	237860	317331	394292	638882
Մարտ	398566	227696	316127	372757	648333
Ապրիլ	395620	230655	315677	382879	653299
Մայիս	416727	237866	325428	387073	671002
Հունիս	422744	241595	331755	390325	683575
Հուլիս	439400	247134	350134	412574	710248
Օգոստոս	438666	252612	350105	414463	731034
Սեպտեմբեր	456417	249098	347949	413177	745436
Հոկտեմբեր	459306	255040	354729	418343	759273
Նոյեմբեր	458936	260759	360449	424788	763163
Դեկտեմբեր	458930	258218	353630	415490	778023
2010					
Հունվար	463073	260796	360935	422924	784401
Փետրվար	456005	264269	366926	427114	809461
Մարտ	479516	263280	360734	415392	823401
Ապրիլ	475131	265755	365698	429293	807888
Մայիս	459366	264808	369865	431859	795429
Հունիս	451819	269876	373757	439870	802492
Հուլիս	439495	266592	372236	437371	798290
Օգոստոս	436497	264162	370595	439430	799377
Սեպտեմբեր	436880	267144	375849	450930	806267
Հոկտեմբեր	442351	269738	378396	458286	819287
Նոյեմբեր	452037	274209	388908	472124	840514
Դեկտեմբեր	452800	279668	398485	485989	867630
2011					
Հունվար	467909	284291	400113	492677	884930
Փետրվար	491039	288409	405643	505098	904365
Մարտ	509459	294400	422603	522379	930846
Ապրիլ	510979	298351	421671	524400	936670
Մայիս	501474	302232	431832	539258	963557
Հունիս	543097	305877	443304	556208	980926
Հուլիս	534219	308654	454607	575234	1000223
Օգոստոս	581718	311892	455315	580599	1018501
Սեպտեմբեր	573782	315026	458451	585895	1021177
Հոկտեմբեր	583803	317769	462406	593898	1040888
Նոյեմբեր	591534	323018	469916	607397	1071420

Դեկտեմբեր	595048	323987	478613	623341	1084680
2012					
Հունվար	574524	328228	485923	630595	1109664
Փետրվար	570500	333272	487487	642511	1115635
Մարտ	564936	337934	499122	664403	1137830
Ապրիլ	593301	349988	509760	680472	1166944
Մայիս	590648	342851	498425	670611	1184018
Հունիս	591558	342059	487151	660628	1206924
Հուլիս	603537	342863	495932	666746	1208457
Օգոստոս	604079	346011	499932	675393	1235824
Սեպտեմբեր	611362	349953	506202	684418	1270583
Հոկտեմբեր	651035	351622	510250	692079	1284232
Նոյեմբեր	629097	356584	514380	706307	1297226
Դեկտեմբեր	601180	357990	509710	701562	1299740
2013					
Հունվար	652521	361443	521163	720542	1332613
Փետրվար	685754	357599	525742	725582	1354806
Մարտ	666596	361753	527013	729273	1364972
Ապրիլ	675278	358773	527113	739271	1384941
Մայիս	724824	359835	525103	735934	1385349
Հունիս	696037	353758	517376	734356	1387561
Հուլիս	725795	354401	518881	738148	1407448
Օգոստոս	734900	349603	521145	746243	1425840
Սեպտեմբեր	733067	348942	526454	757157	1465472
Հոկտեմբեր	733769	350653	529699	764441	1469373
Նոյեմբեր	760035	349269	532407	781219	1476621
Դեկտեմբեր	776222	357688	546518	811364	1498778
2014					
Հունվար	771316	348470	535958	805828	1500776
Փետրվար	760704	347827	532082	804863	1519805
Մարտ	782933	347676	531847	808853	1542461
Ապրիլ	775405	347958	545111	816123	1564249
Մայիս	763192	348520	545539	829829	1580029
Հունիս	757286	348265	545876	835696	1591905
Հուլիս	786790	345700	550036	845883	1590094
Օգոստոս	734839	354694	551883	854096	1602422
Սեպտեմբեր	727237	353380	557189	866714	1620830
Հոկտեմբեր	751844	355862	561750	871535	1626370
